ԺԱՄԱՆԱԿ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ՇԱՐԺՈՒՄ

Քնարիկ Վարդանյան

TIME, SPACE, MOTION

Knarik Vardanyan

CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

Երախտագիտության խոսք

2025թ. դեկտեմբերի 12-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում բացվեց «Քնարիկ Վարդանյան. Ժամանակ, տարածություն, շարժում» ցուցադրությունը:

Քնարիկ Վարդանյանի արվեստը խորը փիլիսոփայական անդրադարձներ է մատուցում: Ընկալելով շարժումը որպես ժամանակի և տարածության սահմանում՝ արվեստագետն իր աշխատանքներով մղում է դիտորդին բացահայտելու անձնական ներաշխարհն ու տիեզերքը: Այս բացահայտմանն է ուղղված նաև ցուցադրության շրջանակում Կենտրոնի նախաձեռնած «Իմ տիեզերքի գույները» կրթական ծրագիրը:

Նման նախաձեռնություններով Գաֆէսճեան արվեստի կենտրոնը փորձում է առավել լիարժեք ներկայացնել հայ կին արվեստագետներին, ովքեր ցավոք համապատասխան գնահատականի չեն արժանացել հանրային լայն շրջանակներում:

Հավատարիմ իր առաքելությանը՝ Գաֆէսճեան արվեստի կենտրոնը շարունակում է ժամանակակից արվեստի առաջատար միտումները ներկայացնել Հայաստանում, և հայկական մշակույթի լավագույնը՝ աշխարհին:

Արդյունավետ համագործակցության համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում կոլեկցիոներ Նարեկ Վան Աշուղաթոյանին և Հայաստանի ազգային պատկերասրահին՝ ի դեմս տնօրեն Մարինա Հակոբյանի:

Ցուցադրության կազմակերպման և իրականացման համար շնորհակալություն եմ հայտնում Գաֆէսճեան արվեստի կենտրոնի անձնակազմին, որի նվիրումի և ջանքերի շնորհիվ կենտրոնը շարունակում է կյանքի կոչել Գաֆէսճեան ժառանգության տեսլականը Հայաստանում:

Վահագն Մարաբյան
Գաֆէսճեան արվեստի կենտրոնի
գործադիր տնօրեն

Արվեստը ժամանակի, տարածության և շարժման առանցքում

Քնարիկ Վարդանյանի (1914-1996) արվեստը կյանքի ամեն մի տարր իր ողջ էությամբ ուսումնասիրելու ու ճանաչելու մասին է՝ սկսած իրական, շոշափելի, հասանելի, առօրեական մակարդակից մինչև անհասանելի, անշոշափելի, տիեզերական հորիզոններ:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնը շարունակում է հայ կերպարվեստի պատմության լուսանցքներում մնացած կին արվեստագետներին բացահայտելու կարևոր առաքելությունը: «Քնարիկ Վարդանյան. Ժամանակ, տարածություն, շարժում» ցուցադրությունը երկար տարիների լռությունից հետո այս ականավոր արվեստագետին իր ողջ գեղարվեստական ներուժով ներկայացնող կարևոր նախագիծ է:

Տասնամյակների հարուստ գեղանկարչական ժառանգության մեջ նկարչուհուն առաջ մղող գլխավոր ուժը մշտապես եղել է շարժումը, որով նա ոչ թե պարզապես հետաքրքրված, այլ տարված է եղել: Իր օրագրերում և հոդվածներում արվեստագետը բազմաթիվ անգամներ անդրադառնում է շարժման ֆենոմենին, և իր ստեղծագործությունները դրա վառ վկայությունն են: Եթե 1950-ական թվականների կտավներում դա անուղղակի է արտացոլված, ապա սկսած 1960-ականների երկրորդ կեսից շարժումը ոչ թե պարզապես անկյունաքարային է դառնում, այլ վերածվում է հեղինակի՝ արվեստով զբաղվելու գլխավոր մոտիվացիայի (հատկապես բնանկարներում): Գեղագիտական իմաստով շարժման ամենակոթողային ընկալումը իր բարձրակետին է հասնում արվեստագետի 1970-1980-ական թվականների ստեղծագործություններում, երբ երկրային շարժումներից հեղինակը անցում է կատարում արդեն միջմոլորակային, կոսմիկ տարածություններ:

«Ժամանակն ու տարածությունը սահմանվում են շարժումով», նշում է արվեստագետը իր օրագրերից մեկում պահպանված մի հոդվածի վերնագրում: Կամ էլ մեկ այլ տեղ կարդում ենք. «իմ նկարչության հիմնական խնդիրը դա շարժման արտահայտելն է՝ լայն առումով»: Այսպես, ժամանակ-տարածություն-շարժում հարաբերությունների ուսումնասիրությունը եղել է Քնարիկ Վարդանյանի արվեստի կիզակետը:

Միևնույն ժամանակ, Քնարիկի սկզբնական գեղագիտությունը և դրա հետագա էվոլյուցիան ուղիղ կապված են պատմական համատեքստի և իր տարաբնույթ կրթական ու զուգահեռ աշխատանքային փորձառության սիմբիոզի, հատկապես նրա ճարտարապետական անցյալի հետ: Որպես ճարտարապետ-շինարար և թատերական նկարիչ աշխատելուց հետո, երբ Քնարիկը որպես գեղանկարիչ սկսեց ցուցադրվել 1950-ականներին, նա ոչ միայն հասուն ու

ձևավորված արվեստագետ էր, այլև խորը արմատացած սկզբունքներով անհատականություն: Զարմանալի չէ՝ ցուցադրությունում ամենավաղ թվագրված աշխատանքը հեղինակել է քառասուներկու տարեկանում:

Արդյունքում, եթե շարժումը եղել է արվեստագետի փիլիսոփայական հենքը, ապա բնություն-ճարտարապետություն հարաբերությունը վերածվել է այդ փիլիսոփայական ընկալման գեղագիտական ֆորմայի: Ցուցադրությանը ներկայացված բոլոր աշխատանքներում կարելի է հետևել՝ ինչպես է Քնարիկ Վարդանյան ճարտարապետը տեսնում երկրաչափական ֆորմաներ բնության մեջ. ժամանակի ընթացքում բնությունը աստիճանաբար գրեթե անհետանում է՝ իր տեղը զիջելով բացարձակ աբստրակտ երկրաչափական-ճարտարապետական ձևերին՝ երկրից մինչև տիեզերք: Այս վիզուալ լեզուն կառուցվում է պարզ երկչափ շեղանկյունների միջոցով, որոնք գունային և լուսաստվերային մոդելավորման արդյունքում դառնում են եռաչափ:

Ակնհայտ է նաև արվեստագետի ստեղծագործություններում եվրոպական, այդ թվում ռուսական ավանգարդի ազդեցությունը: Նրա օրագրերում կարելի է հանդիպել տասնյակ հոդվածների, ցուցադրությունների, գրքերի ու արվեստի պատմության տարբեր շրջանների վերլուծություններ, հատկապես վերացական արվեստի և ֆուտուրիզմի շուրջ:

Ցուցադրությանը ներկայացված շուրջ հիսուն աշխատանքների մեծամասնությունը կոլեկցիոներ Նարեկ Վան Աշուղաթոյանի հավաքածուից են, ով սերտորեն համագործակցել է արվեստագետի զարմուհու հետ, իսկ մի շարք ստեղծագործություններ և կարևոր արխիվային նյութեր տրամադրվել են Հայաստանի ազգային պատկերասրահի (ՀԱՊ) կողմից: Առաջին անգամ ցուցադրվում է նաև նկարչուհու խիստ անձնական, ինտիմ արվեստային խոհանոցը, որտեղ նա գծանկարների միջոցով ուսումնասիրել է բնությունը, ճարտարապետությունը, տիեզերքը և, ինչն ամենակարևորն է՝ ինքն իրեն:

«Քնարիկ Վարդանյան. ժամանակ, տարածություն, շարժում»-ը արվեստագետին ներկայացնող երբևէ եղած ամենամեծ ցուցադրությունն է՝ իր բովանդակությամբ արտացոլելով նկարչուհու մանիֆեստը. «Արվեստագետը պետք է հետևի բնության օրենքներին և օրգանական միասնությամբ կերտի ձևն ու նրա բաղկացուցիչ բոլոր տարրերը. այս միտքը այլևս ոճի ըմբռնում չէ, այլ ձևը իրականության հետ կապելու համոզմունք»:

Արմեն Եսայանց
Արվեստագիտության թեկնածու
Ցուցադրությունների գծով տնօրեն
ԳԱԿ

Արվեստագետի մայրը՝ Թագուհի Վարդանյանը, սերում էր կալվածատեր իշխանական տոհմից՝ Ալաշկերտից: Ամուսնու՝ Քնարիկի հոր մահվանից հետո, ոչ միայն կարողացել է միայնակ ապահովել ընտանիքի կենցաղը, այլև մշտապես աջակցել է արվեստագետ դստերը իր ընտրած ճանապարհին, հատկապես ուսման մեջ:

The artist's mother, Taguhi Vardanyan, came from a landowning noble family from Alashkert. After the death of her husband, Knarik's father, she not only managed to provide for the family on her own, but also consistently supported her artist daughter in the path she had chosen, particularly in her education.

Մայրիկիս՝
Թագուհու դիմանկարը
Portrait of
My Mother Taguhi
1966

Կթվորուհի Սարգսյանի
դիմանկարը
Portrait of
Milkmaid Sargsyan
1961

Մոր դիմանկարի էսքիզը
հեղինակի օրագրերից մեկում:
The sketch for the portrait of
the artist's mother in one of
her diaries.

1976

Ես ոգևորված եկա Սևան (4 հուլիսի)՝ հույս ունենալով, որ կնկարեմ բնությունից հոյակապ կտավներ, որոնք արդեն իմ գլխում էին՝ Սևանից ստացած տպավորությունից, մի քանի օր դրանից առաջ այցի շնորհիվ: 5 օր տանջվելուց հետո ես համոզվեցի, որ այդ հոյակապ բնությունը ինձ միայն ստրկացնում է: Ես նրան արտանկարել չեմ ուզում, որովհետև այդ շատ ավելի քիչ կարող է վերարտադրել այն ինչը ինձ ձգեց: Ես ուզում եմ Սևանի բնույթը տալ, նրա ոգին, նրա ամեն վայրկյան փոփոխվող շունչը, նրա նուրբ թեթև և միաժամանակ առնական բնույթը, այն օդը, որը պարուրվում է նրան շրջապատող վեհ սարերին:

I came to Sevan full of excitement (on July 4), hoping to paint magnificent canvases from nature—images that were already forming in my mind after a visit to the lake a few days earlier. After five days of struggling, I realized that this magnificent landscape only enslaves me. I do not want to copy it, because doing so would reproduce far less than what truly captivated me. What I want is to convey the nature of Sevan—its spirit, its breath that changes from moment to moment, its gentle lightness yet simultaneously its masculine force; the air that wraps around the surrounding majestic mountains.



Հորատում

Կտավ, յուղաներկ

Drilling

Oil on canvas

1964

134,5x131 սմ/cm

Անահիտ Վարդանյանի հավաքածու

Collection of Anahit Vardanyan

«Հորատում» նկարի էսքիզներ

Sketches for the painting Drilling

1964